ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հոկտեմբերի 2016 թվականի N 251-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N1474-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 04/11.21/5414-16 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքին նվիրաբերված *49,652,145.46* ՀՀ դրամ արժեքով շենքի *(այսուհետ՝ գույք)* հանձնման-ընդունման աշխատանքները իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

1) ***Վահագն Ոսկանյան*** - հանձնաժողովի նախագահ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,

2) ***Արմեն Վարդանյան*** - հանձնաժողովի անդամ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

3) ***Արթուր Հակոբյան*** - հանձնաժողովի անդամ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի առաջատար մասնագետ:

2. Հանձնաժողովին՝ *գործունեությունը ժամկետում սահմանված կարգով իրականացնել գույքի հանձնման-ընդունման աշխատանքները:*

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի հոկտեմբերի 31
ք. Հրազդան